ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***23.11.2016 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 87-ը:

Մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կարեն Իսախանյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը և բաժինների վարիչները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը մշակելու և մարզի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը կազմելու ընթացքի մասին:

/Ձեկ. Վարդուհի Մնացականյան – մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

2. 2016 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Ձեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2016 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

/Ձեկ. Ալբերտ Աղեկյան – մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ/

4. Այլ հարցեր:

Հայտարարություններով հանդես եկան՝

Յուրա Մուշեղյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Համբարձում Համբարձումյանը - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2016 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ մինչև տարեվերջ սեփական եկամուտների կատարողականը 100o/o ապահովելու համար.

2) աշխատանքներ տանել աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

3) համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները ավարտել և մինչև 2016 թվականի դեկտեմբերի 5-ը ծրագրերը ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան.

4) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից պահանջվող տեղեկատվությունները ներկայացնել սահմանված ժամկետներում.

5) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներին 2016 թվականին և նախորդ տարիներին բաշխված սերմացուների՝ ցորեն, գարի, առվույտ և պարարտանյութերի բաշխման ու գումարների հավաքագրման մասին.

6) վերանայել և թարմացնել համայնքների անձնագրերը .

7) սահմանված ժամկետում վերացնել վարչական հսկողության արդյունքում գրանցված թերությունները և այսուհետ դրանք բացառելու նպատակով համագործակցել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ մեթոդական աջակցություն ստանալու համար.

8) ձեռնպահ մնալ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների վերազանցումից:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանին՝

1) 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների 2016 թվականի բյուջեների կատարողականի ամփոփումից հետո ներկայացնել կարգադրության նախագիծ՝ հանձնաժողով ստեղծելու մասին, սեփական եկամուտների մինչև 60o/o կատարողական ապահոված համայնքներում պահանջվող ցուցանիշները չապահովելու պատճառները ուսումնասիրելու համար.

2) ուշադրության կենտրոնում պահել մարզի համայնքների կողմից իրականացվող գնումների գործընթացը:

3. **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանին, աշխատակազմի կրթության, մշակույթի ու սպորտի վարչության պետ Գարիկ Բաղալյանին և առողջապահության ու սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝** աշխատանքներ տանել մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և մարզային ենթակայության կազմակերպությունների տնօրենների հետ՝ հարկային պարտավորությունները չկատարած աշխատողների կողմից պարտքերը մարելու ուղղությամբ:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալբերտ Աղեկյանին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտումներով գնումներ իրականացրած համայնքների ցանկը:

5. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Համբարձում Համբարձումյանին՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն մարզի Ջիլ և Տրետուք համայնքների հողօգտագործողների և չօգտագործվող հողատեսքերի մասին.

2) ՀՀ Գեղարքունիքի մարզպետին տեղեկատվություն ներկայացնել մարզի համայնքների շահառուների կողմից չօգտագործվող հողատեսքերի քանակի և խոշոր հողօգտագործողների վերաբերյալ:

6. Մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վաչագան Գրիգորյանին՝ մարզի համայնքների ղեկավարների հետ մեկ անգամ ևս քննարկել 2016 թվականի վարչական հսկողության արդյունքում գրանցված թերությունները և դրանց վերացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ